



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(զանգատ թիվ 12999/15)

ՎՃԻՌ

Հոդված 9 • Կրոնը կամ համոզմունքն արտահայտելը • Համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից խուսափելու համար անհամաչափ պատժի սահմանում՝ առանց պատշաճ կերպով հաշվի առնելով նրա կրոնական համոզմունքները

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հուլիսի 2021թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Ավանեսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],

Յուլյա Անտոանելլա Մոտոկ [Iulia Antoanella Motoc],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *դատավորներ,* եւ Իլզե Ֆրայվիրտ
[Ilse Freiwrth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության
մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի
Հանրապետության քաղաքացի պրն Արթուր Ավանեսյանի (դիմումատու) կողմից
ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2015 թվականի մարտի 12-ին Դատարան
ներկայացված գանգատը,

դիմումատուի կրոնի ազատության իրավունքը ենթադրաբար խախտելու
վերաբերյալ բողոքի մասին Հայաստանի կառավարությանը (Կառավարություն)
ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու վերաբերյալ
որոշումը,

կողմերի դիտարկումները,

2021 թվականի հունիսի 15-ին անցկացնելով դոնփակ խորհրդակցություն,
կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն գործը վերաբերում է դիմումատուի՝ համոզմունքի պատճառով զինվորական ծառայություն կատարելուց հրաժարվելուն եւ զորակոչից խուսափելու համար նրա նկատմամբ պատիժ սահմանելուն եւ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն առաջացած խնդիրներին:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1995 թվականին եւ բնակվում է Մասիս քաղաքում՝ Հայաստանի Հանրապետությունում: Դիմումատուին համապատասխանաբար ներկայացրել են Ստրասբուրգում եւ Երեւանում գործող փաստաբաններ պրն Ս.Հ. Բրեդին եւ տկն Ե. Մարգարյանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը, որոնք ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

5. Դիմումատուն Եհովայի վկա է: Նա ծնվել եւ տվյալ ժամանակահատվածում բնակվել է Ասկերան քաղաքում, որը գտնվում է չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (այսուհետ՝ ԼՂՀ): Նա ազգությամբ հայ է եւ 2012 թվականից սկսած ունի հայկական անձնագիր:

6. 2014 թվականի հունվարի 29-ին դիմումատուն ստացել է զինվորական ծառայության անցնելու նպատակով Ասկերանի զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ ծանուցագիր:

7. 2014 թվականի հունվարի 30-ին դիմումատուն նամակով դիմել է

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ասկերանի զինվորական կոմիսարիատ՝ նշելով, որ որպես Եհովայի վկա իր համոզմունքը թույլ չի տալիս իրեն ծառայել բանակում: Քանի որ Հայաստանում գործում է այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, նա պատրաստակամ էր պարտադիր զինվորական ծառայության փոխարեն իրականացնել այդ ծառայությունը:

8. Նույն օրը դիմումատուն տեղափոխվել է Հայաստանի Մասիս քաղաք, քանի որ, համաձայն իր փաստարկների, նա համոզված է եղել, որ իր դիմումը մերժվելու է, եւ ինքը վախեցել է քրեական հետապնդումից:

9. 2014 թվականի փետրվարի 5-ին նա դիմել է համապատասխան մարմին՝ Մասիս քաղաքում իր բնակության վայրը գրանցելու համար:

10. 2014 թվականի փետրվարի 12-ին նա գրանցվել է Մասիսի զինվորական կոմիսարիատում, որը նույն օրը խնդրել է Ասկերանի զինվորական կոմիսարիատին փոխանցել նրա անձնական գործը:

11. 2014 թվականի փետրվարի 13-ին դիմումատուն դիմել է Մասիսի զինվորական կոմիսարիատ՝ խնդրելով զինվորական ծառայության փոխարեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն իրականացնելու թույլտվություն:

12. 2014 թվականի փետրվարի 17-ին ԼՂՀ-ի Ասկերանի շրջանի դատախազությունը դիմումատուի նկատմամբ հարուցել է քրեական հետապնդում ԼՂՀ -ի քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի 1-ին կետով (զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելը, տե՛ս ստորեւ 25-րդ պարբերությունը):

13. 2014 թվականի մարտի 3-ին ԼՂՀ-ի ոստիկանության քրեական հետախուզության բաժնի քննիչը կարգադրել է, որ դիմումատուն ներկայացվի հարցաքննության: Այդ որոշման մեջ նշվել է, որ դիմումատուի՝ Մասիս քաղաքի հասցեով 2014 թվականի մարտի 1-ին հարցաքննության ներկայանալու վերաբերյալ ծանուցագիր է ուղարկվել, սակայն դիմումատուն չի ներկայացել:

14. 2014 թվականի մարտի 14-ին քննիչը դիմումատուին պաշտոնական

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
մեղադրանք է առաջադրել ԼՂՀ-ի քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի 1 կետով եւ
դիմումատուի նկատմամբ հայտարարել է հետախուզում, քանի որ նրա գտնվելու
վայրն անհայտ է եղել, եւ հնարավոր չի եղել վերջինիս հրավիրել հարցաքննության,
որովհետեւ նա գտնվել է ԼՂՀ-ի տարածքից դուրս:

15. Նույն օրը ԼՂՀ-ի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ նույն հիմքով կիրառել
նախնական կալանք:

16. Դիմումատուն պնդել է, որ այլընտրանքային քաղաքացիական
ծառայություն իրականացնելու առնչությամբ Հայաստանում ներկայացված իր
գանգատը (տե՛ս վերելում 11-րդ պարբերությունը) պետք է Հայաստանի
Հանրապետության համապատասխան մարմնի կողմից քննվեր 2014 թվականի
հուլիսի 25-ին:

17. Ծանուցագիրն ստանալուց հետո՝ 2014 թվականի հուլիսի 14-ին,
դիմումատուն ներկայացել է Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության
կենտրոնական բաժին: Նրան անմիջապես ձերբակալել եւ հանձնել են ԼՂՀ-ի
ոստիկանության աշխատակիցներին, որոնք նույն օրը տեղափոխել են նրան ԼՂՀ եւ
պահել են նախնական կալանքի տակ:

18. Չպարզված օրը ԼՂՀ-ի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանում սկսվել է դիմումատուի դեմ հարուցված քրեական գործով
դատավարությունը: Դիմումատուն դատարանում նշել է, որ իր դեմ հարուցված
քրեական գործով խախտվել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իր
իրավունքները: Նա նաեւ պնդել է, որ որպէս Հայաստանի քաղաքացի, նա
իրավունք ունի իրականացնելու այլընտրանքային քաղաքացիական
ծառայություն՝ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի համաձայն:

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

19. 2014 թվականի սեպտեմբերի 30-ին ԼՂՀ-ի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը դիմումատուին մեղսագրվող արարքի համար մեղավոր է ճանաչել եւ դատապարտել երկու տարի եւ վեց ամիս ժամկետով ազատազրկման:

20. 2014 թվականի հոկտեմբերի 22-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ բերելով այն նույն փաստարկները, որոնք ներկայացրել էր գործը քննող դատարանում (տե՛ս վերելում 18 պարբերությունը):

21. 2014 թվականի նոյեմբերի 26-ին ԼՂՀ-ի վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը եւ անփոփոխ թողել [ընդհանուր իրավասության] առաջին աստիճանի դատարանի դատավճիռը: Վերաքննիչ դատարանը մերժել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով դիմումատուի փաստարկները: Այն գտել է, որ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը, որին հղում է արել դիմումատուն, կիրառելի չէ ԼՂՀ-ում. ուստի այն փաստը, որ նա Եհովայի վկա է, ԼՂՀ-ի բանակում ծառայությունից ազատվելու համար հիմք չի համարվում:

22. 2014 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

23. 2014 թվականի դեկտեմբերի 25-ին ԼՂՀ-ի գերագույն դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը մերժել է հիմքերի բացակայության պատճառով:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՔԸ

24. «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ին՝ Հայաստանում ներդնելով այլընտրանքային ծառայությունը: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի այն քաղաքացիները, որոնց համոզմունքներին կամ կրոնական դավանանքին հակասում են զինվորական ծառայություն անցնելը, կարող են անցնել

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
այլընտրանքային ծառայություն, որը ներառում է այլընտրանքային
քաղաքացիական ծառայությունը:

II. ԼՂՀ-Ի ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՔ

25. Ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից
խուսափելու համար ԼՂՀ-ի քրեական օրենսգրքի (2013թ.) 347-րդ հոդվածի 1-ին
կետով նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

26. Կառավարությունը միակողմանի հայտարարություն է ներկայացրել՝
պահանջելով, Դատարանից Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն,
զանգաստը հանել քննվող գործերի ցուցակից:

27. Դիմումատուն առարկություն է ներկայացրել Կառավարության
միակողմանի հայտարարության դեմ:

28. Իր նախադեպային իրավունքով սահմանված չափորոշիչների լույսի
ներքո Դատարանը համարում է, որ Կառավարության կողմից ներկայացված
միակողմանի հայտարարությունը բավարար հիմքեր չի պարունակում
եզրակացնելու համար, որ մարդու իրավունքները հարգելու պարտավորությունը,
ինչպես սահմանված է Կոնվենցիայով, չի պահանջում Դատարանից շարունակել
գործի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետի վերջում): Ուստի Դատարանը
մերժում է զանգաստը հանելու մասին Կառավարության պահանջը եւ
համապատասխանաբար շարունակելու է գործի ըստ էության քննությունը (տե՛ս
Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի (նախնական առարկություններ) [ՄՊ] [*Tahsin
Acar v. Turkey* (preliminary objections) [GC]], թիվ 26307/95, § 75, ՄԻԵԴ 2003-VI):

II ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

29. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու պատճառով իր ձերբակալությամբ եւ հետագա կալանավորմամբ, հետապնդմամբ եւ դատապարտմամբ խախտվել են Կոնվենցիայի 9-րդ հոդվածի երաշխիքները, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Մեփական կրոնը եւ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների»:

Ա. Ընդունելիությունը

1 Իրավագործությունը

30. Դատարանը պետք է նախելառաջ որոշի, թե արդյոք բողոքարկվող հարցի նպատակով Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով դիմումատուի վրա տարածվում է պատասխանող պետության իրավագործությունը:

ա) Կողմերի փաստարկները

31. Կառավարությունը պնդել է, որ Հայաստանը ԼՂՀ-ի տարածքում տեղի ունեցած դեպքերի, այդ թվում՝ դիմումատուի կալանավորման եւ դատապարտման առնչությամբ իրավագործություն չուներ: Նրանք պնդել են, որ Հայաստանին վերաբերող ավելի վաղ գործերում (նրանք հղում են կատարել *Չիրագովը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [ՄՊ][*Chiragov and Others v. Armenia* [GC]] գործին, թիվ 13216/05, §§ 169-86, ՄԻԵԴ 2015 եւ *Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* [Muradyan v. Armenia] գործին, թիվ 11275/07, §§ 123-27, 2016 թվականի

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

նոյեմբերի 24) արտատարածքային իրավագործությանն առնչվող՝ Դատարանի կողմից կատարված եզրակացությունը չի կարող եւ չպետք է ավտոմատ կերպով կիրառվի հետագա բոլոր իրավիճակների նկատմամբ: Հիմնվելով Արդարադատության միջազգային դատարանի կողմից մի շարք գործերով որոշումների վրա՝ Կառավարությունը պնդել է, որ Հայաստանին վերագրվող միակ պատասխանատվությունը՝ հաշվի առնելով ԼՂՀ-ին տրամադրվող ռազմական, քաղաքական, ֆինանսական եւ այլ աջակցություն, միջազգային իրավունքի խախտումները կանխելու նպատակով տեղական վարչակազմի վրա ազդելու պարտավորությունն է: Այնուամենայնիվ, Հայաստանը չի կարող պատասխանատվություն կրել չճանաչված տեղական վարչակազմի գործողությունների համար, քանի որ ԼՂՀ-ի իշխանությունները Հայաստանի պաշտոնատար անձինք չեն համարվում, եւ դա կհակասեր պետության պատասխանատվության վերաբերյալ միջազգային սկզբունքներին: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը կարող է պատասխանատվություն կրել միայն այնքանով, որքանով անգործությունը վերաբերում է իր պաշտոնատար անձանց, եւ այն չի կարող առաջանալ տեղական վարչակազմի պաշտոնական անձանց գործողությունների առնչությամբ: Ավելին, վերելում նկարագրված պարտավորությունը կարող է առաջանալ միայն մշտական եւ շարունակական բնույթ ունեցող խախտումների առնչությամբ՝ տալով Հայաստանի Հանրապետության իշխանություններին բավարար ժամանակ տեղական վարչակազմի գործողություններին միջամտելու եւ դրանց վրա ազդելու համար՝ ի տարբերություն առանձին դեպքերի: Դիմումատուի դեպքում իրավիճակն այլ է եղել, եւ հետեւաբար ԼՂՀ-ում նրա կալանավորումը եւ պատժի սահմանումը Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո չեն եղել:

32. Դիմումատուն պնդել է, որ ԼՂՀ-ի իշխանությունների գործողությունների համար Կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետության

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

պատասխանատվության բացակայության վերաբերյալ Կառավարության ներկայացրած պնդումները հակասել են այդ հարցի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին (նա հղում է կատարել վերելում հիշատակված՝ Չիրագովի եւ այլոց գործին, §§169-86, Ջալյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի [Zalyan and Others v. Armenia] գործին, թիվ 36894/04 եւ 3521/07, §§ 214-215, 2016 թվականի մարտի 17, եւ վերելում հիշատակված՝ Մուրադյանի գործին, § 126): Ինչ վերաբերում է Մոզերն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության եւ Ռուսաստանի [Mozer v. the Republic of Moldova and Russia], ([ՄՊ] թիվ 11138/10, §§ 156-58 եւ §§ 217-18, 2016 թվականի փետրվարի 23) եւ Չիրագովը եւ այլք գործերին (վերելում հիշատակված), դիմումատուն պնդել է, որ քանի որ Հայաստանը ԼՂՀ-ի նկատմամբ իրականացնում է արդյունավետ վերահսկողություն, վերջինս Կոնվենցիայի համաձայն պատասխանատվություն է կրում տեղական վարչակազմի, այդ թվում՝ ԼՂՀ-ի դատարանների եւ ԼՂՀ-ի իշխանությունների կողմից իր՝ 9-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտման համար: Եթե այլ կերպ լիներ, կնշանակեր, որ Կոնվենցիան կիրառելի չի եղել ԼՂՀ-ում, եւ որ Դատարանը ԼՂՀ-ն ընդունել է որպես անկախ պետություն: Դիմումատուն վիճարկել է Կառավարության պնդումն այն մասին, որ իրեն հանձնել են ԼՂՀ-ին, եւ պնդել է, որ Հայաստանի ոստիկանությունն իրեն պարզապես հանձնել է ԼՂՀ ոստիկանությանն այնպես, կարծես իրեն տեղափոխել են Հայաստանի մի մարզից մյուս մարզը. սա ինքնին ցույց է տվել, որ ԼՂՀ-ն գտնվում է Հայաստանի արդյունավետ վերահսկողության ներքո: Այսպիսով, Հայաստանը բողոքարկվող հարցերի առնչությամբ ունեցել է իրավագործություն եւ պատասխանատու է եղել դիմումատուի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտման համար:

(բ) Դատարանի գնահատականը

33. Նախեւառաջ, Դատարանը Կառավարության՝ միջազգային հանրային իրավունքի համաձայն պետության պատասխանատվության սկզբունքների հետ կապված փաստարկին ի պատասխան կրկին հիշեցնում է, որ վերջինս հետեւողականորեն հստակեցրել է, որ «իրավագործության» Կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան ստուգումը երբեք չի հավասարեցվել միջազգային իրավունքի համաձայն միջազգային բնույթի ոչ իրավաչափ գործողությունների համար պետության պատասխանատվության հաստատման փորձին (տե՛ս Ջըլաուդն ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], [Jaloud v. the Netherlands [GC]] թիվ 47708/08, § 154, ՄԻԵԴ 2014 եւ Ուկրաինյան ընդդեմ Ռուսաստանի (Ղրիմի հարցով) (որոշում) [ՄՊ] [Ukraine v. Russia (Re Crimea) (dec.) [GC]], թիվ 20958/14 եւ ոչ մի այլ փաստաթուղթ, §311, 2020 թվականի դեկտեմբերի 16):

34. Համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ «իրավագործություն» հասկացության առնչությամբ Դատարանը վերահաստատում է, որ իր կողմից ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ «իրավագործությունը» *sine qua non* (պարտադիր պայման) է, որպէսզի այդ պետությունը պատասխանատվություն կրի իրեն վերագրվող գործողությունների կամ անգործության համար, ինչը Կոնվենցիայով ամրագրված իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ պնդման համար հիմք է ծառայում (տե՛ս Ալ-Սկեյնին եւ այլք ընդդեմ Մեծ Բրիտանիայի [ՄՊ], [Al-Skeini and Others v. the United Kingdom [GC]], թիվ 55721/07, § 130, ՄԻԵԴ 2011 եւ Մ. Ն.-ն ընդդեմ Բելգիայի (որոշում) [ՄՊ], [M.N. v Belgium (dec.) [GC]] թիվ 3599/18, § 97, 2020 թվականի մայիսի 5): Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակով «իրավագործություն» հասկացությանը տրվող նշանակությանը, ապա Դատարանը շեշտել է, որ պետության իրավագործության մասով իրավասությունը հիմնականում տարածքային է (նույն տեղում, § 98, տե՛ս նաեւ Բանկովիչը եւ այլք ընդդեմ Բելգիայի եւ ուրիշների (որոշում) [ՄՊ], [Banković and Others v. Belgium and Others (dec.) [GC]], թիվ 52207/99, §§ 59-61, ՄԻԵԴ 2001XII):

35. Այնուամենայնիվ, Դատարանը ճանաչել է նաեւ մի շարք բացառիկ

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՋԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

հանգամանքներ, որոնց հիման վրա հնարավոր է եզրակացնել, որ պայմանավորվող պետությունն իրականացրել է իրավագործություն իր տարածքային սահմաններից դուրս: Յուրաքանչյուր դատական գործում այն հարցը, թե արդյոք առկա են բացառիկ հանգամանքներ, որոնք պահանջում են արդարացնում են Դատարանի եզրակացությունն այն մասին, որ պետությունն իրականացրել է իրավագործություն իր տարածքից դուրս, պետք է որոշվի՝ հաշվի առնելով առանձին փաստերը: Այն սկզբունքից այդպիսի բացառությունը, որ 1-ին հոդվածով սահմանված իրավագործությունը սահմանափակվում է մասնակից պետության սեփական տարածքով, ծագում է այն դեպքում, երբ այդ պետությունն արդյունավետ վերահսկողություն է իրականացնում իր ազգային տարածքից դուրս գտնվող տարածքի նկատմամբ: Այդ տարածքում Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու պարտավորությունը բխում է այդպիսի վերահսկողության հանգամանքից՝ անկախ նրանից՝ այն իրականացվում է ուղղակիորեն՝ պայմանավորվող պետության սեփական զինված ուժերի միջոցով, թե նրան ենթակա տեղական վարչակազմի միջոցով (այդ իրավիճակների վերաբերյալ նախադեպային իրավունքի համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս վերելում հիշատակված՝ Ալ-Սկեյնիի եւ այլոց գործը, §§ 13840 եւ 142, սույն նախադեպային իրավունքի առավել նոր կիրառման համար տե՛ս Կատանը եւ այլք ընդդեմ Մոլդովայի Հանրապետության եւ Ռուսաստանի [ՄՊ] [Catan and Others v. the Republic of Moldova and Russia [GC]], թիվ 43370/04 եւ 2 այլ փաստաթղթեր, §§ 121 22, ՄԻԵԴ 2012 (քաղվածքներ), վերելում հիշատակված՝ Չիրագովի եւ այլոց գործը, § 186, վերելում հիշատակված՝ Մոզերի գործը, §§ 11011, Սանդուն եւ այլք ընդդեմ Մոլդովայի Հանրապետության եւ Ռուսաստանի, [Sandu and Others v. the Republic of Moldova and Russia], թիվ 21034/05 եւ 7 այլ փաստաթղթեր, §§ 3638, 2018 թվականի հուլիսի 17, եւ վերելում հիշատակված՝ Մ.Ն.-ն ընդդեմ Բելգիայի գործը [M.N. v. Belgium], § 103):

36. Դատարանը նշում է, որ այն արդեն ուսումնասիրել է այդ հարցը եւ Հայաստանի Հանրապետության եւ ԼՂՀ-ի առնչությամբ եկել է նույն

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
Եզրահանգման: Այն գտել է, որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանի
Հանրապետությունը ԼՂՀ-ի եւ հարակից տարածքների նկատմամբ իրականացրել է
արդյունավետ վերահսկողություն եւ դրանով Հայաստանը կրել է այդ տարածքում
Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու
պարտավորություն: Կոնվենցիայի համաձայն՝ նրա պատասխանատվությունը չի
կարող սահմանափակվել ԼՂՀ-ում ծառայություն անցնող իր զինվորների կամ
այնտեղ գործունեություն ծավալող իր պաշտոնյաների գործողություններով, այլ
պատասխանատվությունը ծագում է նաեւ այն տեղական վարչակազմի
գործողությունների ուժով, որը գոյատևում է Հայաստանի կողմից ստացվող
ռազմական կամ այլ օժանդակության շնորհիվ (տե՛ս վերելում հիշատակված՝
Չիրագովի եւ այլոց գործը, §§ 169-86, վերելում հիշատակված՝ Մուրադյանի գործը,
§ 126 եւ վերելում հիշատակված՝ Զալյանի եւ այլոց գործը, §§ 214-15):

37. Դատարանը տվյալ գործում կոնկրետ հանգամանքներ չի գտնում (բոլոր
հանգամանքները տեղի են ունեցել նախքան Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ
վերջին ռազմական գործողությունները, որոնք ավարտվել են 2020 թվականի
նոյեմբերի 10-ին), որոնք իրենից կպահանջեին շեղվել վերոնշյալ վճիռներում իր
Եզրակացություններից, եւ հետեւաբար այն եզրակացնում է, որ այդ ժամանակ
Կոնվենցիայի 1-ին հոդվածի հետ կապված բողոքում ներկայացված հարցերի, այդ
թվում՝ ԼՂՀ-ում դիմումատուի հետապնդման եւ դատապարտման վրա տարածվել է
Հայաստանի Հանրապետության իրավագործությունը:

38. Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունը
ratione loci (տարածքային իրավագործության) առումով անհամատեղելի է եւ
հետեւաբար պետք է մերժվի:

2. Վեցամսյա ժամկետները պահպանելը

39. Կառավարությունը նաեւ առարկություն է հայտնել վեցամսյա ժամկետը

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
պահելու առնչությամբ: Քանի որ համաձայն Կոնվենցիայի՝ Հայաստանի
պատասխանատվությունը ծագում է միայն իր պաշտոնատար անձանց
գործողությունների առնչությամբ, նրանք պնդել են, որ դիմումատուն այդ
գործողությունների առնչությամբ չի պահպանել վեցամսյա ժամկետը:
Մասնավորապես Հայաստանի իշխանությունների՝ հատկապես Հայաստանի
նստիկանության հետ կապված իրադարձություններն ավարտվել էին 2014 թվականի
հուլիսի 14 -ին, երբ դիմումատուն հանձնվել է ԼՂՀ-ին (տե՛ս վերելում 17-րդ
պարբերությունը): Քանի որ դիմումատուն այդ գործողությունների առնչությամբ
սպառելու համար չի ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ
միջոցներ, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով վեցամսյա ժամկետը
պետք է հաշվարկվեր այդ օրվանից: Այնուամենայնիվ, գանգատը ներկայացվել է
միայն 2015 թվականի մարտի 12-ին:

40. Դիմումատուն պնդել է, որ գործին չի վերաբերում այն հանգամանքը՝
արդյոք նա Հայաստանում իր ձերբակալման հետ կապված իրավական
պաշտպանության որևէ միջոց սպառել է, թե ոչ, քանի որ Հայաստանը ԼՂՀ-ի
նկատմամբ իրականացրել է արդյունավետ վերահսկողություն, եւ նրա
ձերբակալությունը, հետապնդումը եւ դատապարտումը համարվել են մեկ
շարունակական խախտում, որի համար Հայաստանը կրել է
պատասխանատվություն: Նա իր ձերբակալությունը եւ իր նկատմամբ պատիժ
սահմանելը վիճարկել է ԼՂՀ-ի դատարաններում՝ բոլոր ատյանների
մակարդակում, եւ իր գանգատը Դատարան է ներկայացրել ԼՂՀ-ի գերագույն
դատարանի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 25-ի իր վերջնական բողոքը
մերժելու վերաբերյալ (տե՛ս վերելում 23-րդ պարբերությունը) կայացրած
որոշումից մոտավորապես երկու ամիս հետո: Հետեւաբար Կառավարության
առարկություններն անհիմն են:

41. Դատարանը վերահաստատում է, որ որպես կանոն վեցամսյա ժամկետը
հաշվարկվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
սպառնելու գործընթացում վերջնական որոշում կայացվելու օրվանից: Այն դեպքում,
երբ ի սկզբանե պարզ է, որ դիմումատուին հասանելի չէ որեւէ իրավական
պաշտպանության արդյունավետ միջոց, վեցամսյա ժամկետը հաշվարկվում է այն
արարքների կամ միջոցառումների օրվանից, որոնց վերաբերյալ ներկայացվում է
բողոք, կամ այդ արարքի, դրա ազդեցության կամ դիմումատուին հասցվող վնասի
մասին տեղեկանալու օրվանից: (տե՛ս Վարնավան եւ այլք ընդդեմ Թուրքիայի [ՄՊ]
[Varnava and Others v. Turkey] [GC], թիվ 16064/90 եւ եւս 8 փաստաթղթեր, § 157,
ՄԻԵԴ 2009):

42. Դատարանը, անդրադառնալով սույն գործի հանգամանքներին, նշում է, որ
Կառավարության՝ վեցամսյա կանոնին համապատասխանության վերաբերյալ
առարկությունը հիմնված է նրանց այն փաստարկի վրա, որ Հայաստանի
իրավագործությունը սահմանափակվում է Հայաստանի ոստիկանության
գործողություններով, այդ թվում՝ Հայաստանում դիմումատուի ձերբակալությամբ եւ
ԼՂՀ-ի ոստիկանություն նրա տեղափոխմամբ: Դատարանն արդեն մերժել է այդ
փաստարկը եւ գտել է, որ Հայաստանը պատասխանատվություն է կրում, ոչ միայն
իր պաշտոնատար անձանց, այլ նաեւ ԼՂՀ-ի պաշտոնատար անձանց
գործողությունների համար, այդ թվում՝ այդ սուբյեկտում դիմումատուին
հետապնդելու եւ նրա նկատմամբ պատիժ սահմանելու համար: Այսպիսով,
Հայաստանի իրավագործությունը տարածվում է դիմումատուի դեմ հարուցված
ամբողջ քրեական վարույթի վրա՝ սկսած Հայաստանում նրա ձերբակալությունից
(տե՛ս վերելում 17-րդ պարբերությունը) եւ ավարտված ԼՂՀ-ի դատարանների
կողմից նրա դատապարտմամբ: Հետեւաբար Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին
կետի իմաստով վերջնական որոշումը եղել է ԼՂՀ-ի գերագույն դատարանի
2014 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը (տե՛ս վերելում 23-րդ
պարբերությունը): Հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուն իր գանգատը
ներկայացրել է այդ որոշումից հետո վեց ամսվա ընթացքում, Դատարանը մերժում
է Կառավարության առարկությունը:

3. Եզրակացություն

43. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ) Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուն

44. Դիմումատուն պնդել է, որ Հայաստանում իր ձերբակալությունը եւ ԼՂՀ-ում նրա հետագա կալանավորումը, հետապնդումն ու դատապարտումը հավասարազոր են 9-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին միջամտելուն:

45. Ըստ դիմումատուի՝ միջամտությունը սահմանված չի եղել օրենքով: Առաջին՝ Հայաստանի ոստիկանության կողմից դիմումատուին ԼՂՀ-ի ոստիկանություն տեղափոխելու առնչությամբ Կառավարությունը հղում չի կատարել որեւէ օրենքի, որով Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից պահանջվել է իրականացնել այդ գործողությունները: Նրա տեղափոխությունը չի կարող բնութագրվել որպես «հանձնում», ինչպես պնդում է Կառավարությունը, սակայն եթե նույնիսկ դա դիտարկվել է որպես փաստացի հանձնում, ապա դա կատարվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ քրեական դատավարության օրենսգրքի խախտմամբ, քանի որ Հայաստանի Հանրապետությունը չի թույլատրում իր քաղաքացիների հանձնումը: Երկրորդ՝ ԼՂՀ-ի դատարանի կողմից նրան դատապարտելը նույնպես եղել է անօրինական, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նա չի կատարել որեւէ հանցագործություն: Հայաստանը ճանաչել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի համաձայն համոզմունքի հիմնավորմամբ

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Ի հակադրություն
Կառավարության պնդման՝ նա Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որի
մասին վկայում է վերջինիս անձնագիրը (տե՛ս վերելում 5-րդ պարբերությունը), եւ
որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի նա այդ իրավունքն
իրականացրել է՝ դիմելով Հայաստանի Հանրապետության համապատասխան
մարմին այն խնդրանքով, որ իրականացնի այլընտրանքային քաղաքացիական
ծառայություն, եւ չէր կարող ենթարկվել հետապնդման, քանի դեռ իր դիմումն
ընթացքի մեջ է եղել: Ավելին, ԼՂՀ-ի դատարանը չի կարող համարվել օրինական
մարմին, որը կարող է դիմումատուի նկատմամբ հետապնդում իրականացնել եւ
պատիժ սահմանել (նա հղում է կատարում վերելում հիշատակված՝ Մոզերի
գործին, §§143-48):

46. Բացի այդ, միջամտությունն իրավաչափ նպատակ չի հետապնդել, քանի
որ նրա ձեռքակալությունը, հետապնդումը եւ դատապարտումն իրականացվել են
Հայաստանի Հանրապետության օրենսդրության եւ Սահմանադրության, այդ
թվում՝ Բայթյանն ընդդեմ Հայաստանի գործով դատարանի դատավճռի ([ՄՊ]
[GC]), թիվ 23459/03, ՄԻԵԴ 2011) բացահայտ ոտնահարմամբ :

47. Վերջապես այդ միջամտությունն անհրաժեշտ չի եղել
ժողովրդավարական հասարակությունում: Մասնավորապես այլընտրանքային
քաղաքացիական ծառայությունը հասանելի է եղել Հայաստանի
Հանրապետությունում եւ դիմումատուն դիմել է այդ ծառայությունն
իրականացնելու համար: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն
այլընտրանքային ծառայության իրականացումը թույլատրելու փոխարեն գործել է
այնպես, որ խոչընդոտել է դիմումատուի կողմից այլընտրանքային ծառայության
իրականացումը եւ համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից
հրաժարվելու համար նրան պատժի է ենթարկել: Նրանք դիմումատուի՝
այլընտրանքային ծառայություն իրականացնելու մասին դիմումի վերաբերյալ
որոշում կայացնելուց ընդամենը տասնմեկ օր առաջ վերջինիս ձեռքակալել եւ

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
հանձնել են ԼՂՀ-ի իշխանություններին (տե՛ս վերելում 16-րդ եւ 17-րդ
պարբերությունները)՝ քաջատեղյակ լինելով այն մասին, որ համոզմունքի
հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար նրան
կկալանավորեն, կհետապնդեն եւ կդատապարտեն:

48. Այսպիսով, դիմումատուի ներկայացրած փաստարկներում Երեւանում
նրա ձերբակալությամբ եւ ԼՂՀ-ում նրա հետագա կալանավորմամբ,
հետապնդմամբ եւ դատապարտմամբ խախտվել են 9-րդ հոդվածով նախատեսված
իր իրավունքները:

բ) Կառավարությունը

49. Կառավարությունն ի սկզբանե պնդել է, որ 2004 թվականին
«Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը ներդնելուց ի վեր Հայաստանում
համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձինք
օգտվել են համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից
հրաժարվելու եւ այլընտրանքային քաղաքացիական ծառայություն
իրականացնելու իրավունքից: Մյուս կողմից, ԼՂՀ-ն, չլինելով Եվրոպայի խորհրդի
անդամ եւ չլրելով Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված
պարտավորությունները, համարվել է առանձին սուբյեկտ եւ չէր կարող
Հայաստանի Հանրապետությունում կատարվող օրենսդրական
փոփոխություններից ազդեցություն կրել: Այն սույն հարցի առնչությամբ մշակել է
իր անկախ ռազմավարությունը՝ որոշելով չներդնել այլընտրանքային
ծառայությունը՝ հաշվի առնելով իր քաղաքական եւ ռազմական
յուրօրինակ իրավիճակը:

50. Կառավարությունն այնուհետեւ պնդել է, որ դիմումատուի՝ 9-րդ
հոդվածով նախատեսված իրավունքներին Հայաստանի իշխանությունների միակ
միջամտությունը եղել է այն, որ նրան հանձնել են ԼՂՀ-ին, որտեղ նա համոզմունքի
հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար
հետապնդվելու եւ դատապարտվելու միջոցով կանգնել է այդ դրույթի հնարավոր

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

խախտման վտանգի առջև: Հետեւաբար Կառավարությունը ցանկացել է զերծ մնալ ԼՂՀ-ում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ որեւէ փաստարկ ներկայացնելուց: Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից դիմումատուի հանձնմանը, Կառավարությունը պնդել է, որ չնայած դիմումատուն Հայաստանում այլընտրանքային քաղաքացիական ծառայություն իրականացնելու մասին դիմում է ներկայացրել (տե՛ս վերելում 11-րդ պարբերությունը), սակայն որեւէ երաշխիք չի եղել, որ իր դիմումին դրական պատասխան կտրվեր, քանի որ նա ԼՂՀ-ի քաղաքացի է եղել եւ որեւէ զինվորական կոմիսարիատում հաշվառված չի եղել: Ուստի նրա հանձնումն իրավաչափ նպատակ է հետապնդել, քանի որ նրա դեմ քրեական վարույթը պաշտոնապես հարուցվել է ԼՂՀ-ում: Այնուամենայնիվ, Կառավարությունը պատրաստ է եղել ընդունել, որ դիմումատուի հանձնումը ժողովրդավարական հասարակությունում կարող էր լինել անօրինական կամ անտեղի: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության իշխանությունները, քաջատեղյակ լինելով ԼՂՀ-ում գործող օրենսդրությունից եւ այն փաստից, որ դիմումատուի հանձնումը, ամենայն հավանականությամբ, կհանգեցներ դատապարտման, չեն հետեւել հանձնման պաշտոնական ընթացակարգին կամ պատշաճ կերպով հաշվի չեն առել հանձնման իրավաչափությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ այն կարող է դիմումատուի՝ կրոնի ազատության իրավունքի առնչությամբ խնդիրներ առաջացնել:

2. *Դատարանի գնահատականը*

ա) **Արդյոք միջամտություն եղել է, թե՛ ոչ**

51. Դիմումատուն պնդել է, որ զինվորական ծառայության զորակոչվելուց հրաժարվելը եղել է կրոնական համոզմունքի արտահայտություն, ինչը Կառավարությունը չի վիճարկել, եւ որի առնչությամբ Դատարանը կասկածելու որեւէ հիմք չի ունեցել: Հետեւաբար զորակոչից խուսափելու համար նրան դատապարտելը (տե՛ս վերելում 19-րդ պարբերությունը) հավասարազոր էր 9-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ կրոնի դավանման ազատությանը միջամտելուն (տե՛ս վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 112): Այդպիսի միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա «սահմանված է օրենքով», հետապնդում է 2-րդ կետով սահմանված մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ եւ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Բուսկարինին եւ այլք ընդդեմ Սան Մարինոյի [ՄՊ] [Buscarini and Others v. San Marino [GC]], թիվ 24645/94, § 34, ՄԻԵԴ 1999-I եւ վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 112):

բ) **Արդյո՞ք միջամտությունը հիմնավորված էր**

i) *Օրենքով սահմանված լինելը եւ իրավաչափ նպատակը*

52. Դատարանը նշում է, որ ի սկզբանե կողմերը միակարծիք չեն եղել այն հարցի շուրջ, թե արդյոք դիմումատուի իրավունքներին միջամտելը սահմանված է եղել օրենքով եւ ունեցել է իրավաչափ նպատակ: Դատարանը, այնուամենայնիվ, անհրաժեշտ չի համարում այս հարցերի վերաբերյալ որոշում կայացնել՝ հաշվի առնելով միջամտության անհրաժեշտության հետ կապված ստորեւ նշված եզրահանգումները (տե՛ս, *mutatis mutandis*, (համապատասխան փոփոխություններով) Քրիստոնեադեմոկրատական ժողովրդական կուսակցությունն ընդդեմ Մոլդովայի [Christian Democratic People's Party v. Moldova], թիվ 28793/02, §§ 49-54, ՄԻԵԴ 2006-II եւ վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 116-17):

ii) *Անհրաժեշտությունը ժողովրդավարական*

հասարակությունում

53. Դատարանը վերահաստատում է, որ ինչպես սահմանված է 9-րդ հոդվածով, մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը Կոնվենցիայի իմաստով «Ժողովրդավարական հասարակության» հիմնաքարերից մեկն է: Այս ազատությունն իր կրոնական իմաստով հավատացյալների ինքնությունը եւ կյանքի վերաբերյալ նրանց պատկերացումները կազմող կարեւորագույն տարրերից մեկն է, սակայն այն նաեւ արժեքավոր երեւոյթ է արեւիստների, ազնոստիկների, սկեպտիկների եւ անտարբեր անձանց համար: Ժողովրդավարական հասարակության անքակտելի մաս կազմող բազմակարծությունը, որը դարեր շարունակ սերմանվել է, պայմանավորված է դրանով: Այդ ազատությունը ենթադրում է, *inter alia*, կրոնական համոզմունքներ ունենալը կամ չունենալը եւ որեւէ կրոն դավանելը կամ չդավանելը (տե՛ս վերելում հիշատակված՝ Բուսկարինին եւ այլք ընդդէմ Սան Մարինոյի գործը, § 34, Լեյլա Շահինն ընդդէմ Թուրքիայի [ՄՊ] [Leyla Şahin v. Turkey [GC]], թիվ 44774/98, § 104, ՄԻԵԴ 2005-XI եւ վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 118):

54. Չնայած կրոնական ազատությունն ի սկզբանե պայմանավորված է անհատական գիտակցությամբ, սակայն այն նաեւ ենթադրում է, *inter alia*, սեփական կրոնը դավանելու ազատություն՝ միանձնյա եւ առանձին կամ այլ անձանց հետ միասին, հրապարակայնորեն կամ միեւնոյն կրոնը դավանող այլ անձանց շրջանում: 9-րդ հոդվածում նշված են մի շարք ձեւեր, թե ինչպես կրոնի կամ համոզմունքի արտահայտումը կարող է դրսեւորվել, մասնավորապէս՝ քարոզչություն, արարողություններ պաշտամունք եւ ծես (տե՛ս Հասանը եւ Չաուշն ընդդէմ Բուլղարիայի [ՄՊ] [Hasan and Chaush v. Bulgaria [GC]], թիվ 30985/96, § 60, ՄԻԵԴ 2000XI եւ վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 119):

55. Իր կողմից սահմանված նախադեպային իրավունքի համաձայն՝ Դատարանը միջամտության անհրաժեշտությունը եւ դրա չափը որոշելու հարցում Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններին վերապահում է հայեցողական

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՋԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

լիազորությունների որոշակի շրջանակ: Հայեցողական լիազորությունների շրջանակը սերտորեն փոխկապակցված է եվրոպական վերահսկողության հետ, որն ընդգրկում է դա կիրառող օրենսդրությունն ու որոշումները: Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք ազգային մակարդակում ձեռնարկված միջոցներն ընդհանուր առմամբ հիմնավորված եւ համարժեք են, թե ոչ (տե՛ս վերելում հիշատակված՝ Լեյլա Շահինի գործը, § 110): Ավելին, որքանով Դատարանը հնարավորություն է ունեցել ուսումնասիրելու այս հարցը, հստակեցրել է, որ պետությունը, որն անհատի զիտակցության եւ զինվորական պարտականությունների միջեւ ի հայտ եկած հակասությունները վերացնելու նպատակով չի ներկայացրել զինվորական ծառայության այլընտրանքային տարբերակներ, ունի հայեցողական լիազորությունների միայն սահմանափակ շրջանակ եւ պետք է ներկայացնի համոզիչ ու ծանրակշիռ պատճառներ որեւէ միջամտություն հիմնավորելու համար: Մասնավորապես այն պետք է ցույց տա, որ միջամտությունը համապատասխանում է «ծայրահեղ սոցիալական անհրաժեշտությանը» (տե՛ս վերելում հիշատակված՝ Բայաթյանի գործը, § 123):

56. Դատարանը նաեւ որոշել է, որ պարտադիր զինվորական ծառայության ցանկացած համակարգ ծանր բեռ է քաղաքացիների համար: Սա ընդունելի կլինի այն դեպքում, երբ այն բաշխվի հավասար հիմունքներով, եւ այս պարտականությունից ազատումը հիմնված լինի լուրջ եւ համոզիչ հիմնավորումների վրա: Այնուամենայնիվ, համակարգը, որով քաղաքացիները ստանձնում են այնպիսի պարտավորություն, որը պոտենցիալ լուրջ հետեւանքներ է առաջ բերում համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար, ինչպես օրինակ՝ բանակում ծառայելու պարտավորությունը՝ հաշվի չառնելով անձի խղճի եւ համոզմունքների պահանջները, չի կարող արդարացի հավասարակշռություն սահմանել ընդհանուր առմամբ հասարակության եւ անհատների շահերի միջեւ (նույն տեղում, §§ 124 եւ 125):

57. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ անվիճելի է այն

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

փաստը, որ դիմումատուն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ է, որը փորձում է ազատվել զինվորական ծառայությունից ոչ թե անձնական շահի կամ հարմարության պատճառով, այլ իր իրական կրոնական համոզմունքների հիման վրա (նույն տեղում, § 124, տե՛ս նաև Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի, [Bukharatyan v. Armenia] թիվ 37819/03, § 48, 2012 թվականի հունվարի 10): Թեև տվյալ ժամանակահատվածում այլընտրանքային քաղաքացիական ծառայությունը հասանելի է եղել Հայաստանի Հանրապետությունում համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար, ինչպիսին է դիմումատուն (տե՛ս վերելում 24-րդ պարբերությունը), սակայն նա չի կարողացել օգտվել այդ ընտրության իրավունքից, քանի որ նա, ըստ երեւոյթին, ունեցել է ԼՂՀ-ում զինվորական ծառայության անցնելու իրավունք, որը, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, չի ճանաչել համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Կառավարությունը պնդել է, որ չնայած դիմումատուն դիմել է այլընտրանքային քաղաքացիական ծառայություն իրականացնելու համար, որեւէ երաշխիք չի եղել, որ իրեն թույլ կտան այդ ծառայությունն իրականացնել՝ հաշվի առնելով այն փաստը, որ վերջինս ԼՂՀ-ի քաղաքացի է (տե՛ս վերելում 50-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, նրանք չեն ներկայացրել որեւէ ապացույց՝ ի հիմնավորումն իրենց այն պնդման, որ դիմումատուն ԼՂՀ-ի քաղաքացի է, եւ ըստ էության՝ գործի նյութերից պարզ է դառնում, որ դիմումատուն 2012 թվականից ունեցել է հայկական անձնագիր (տե՛ս վերելում 5-րդ պարբերությունը): Կառավարությունն անտեսել է այդ փաստը եւ հետեւաբար չի բացատրել, թե ինչու դիմումատուին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, խոչընդոտել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի համաձայն իրացնել իրեն տրված համոզմունքի հիմնավորմամբ զինծառայությունից հրաժարվելու իրավունքը (տե՛ս վերելում 24-րդ պարբերությունը), եւ փոխարենը նա ստիպված է եղել ենթարկվել խստագույն քրեական պատժամիջոցների (տե՛ս վերելում 19-րդ պարբերությունը): Ավելին, իշխանություններն, ըստ երեւոյթին, քայլեր են ձեռնարկել դա կանխելու համար, մինչդեռ դիմումատուի՝ այլընտրանքային ծառայության մասին դիմումն արդեն

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՍՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
գտնվել է ընթացքի մեջ Հայաստանի Հանրապետության համապատասխան
մարմնում (տե՛ս վերելում 11-րդ, 16-րդ եւ 17-րդ պարբերությունները):

58. Ամեն դեպքում, նույնիսկ եթե ենթադրենք, որ դիմումատուն ԼՂՀ-ի
«քաղաքացի» է, ինչպես պնդել է Կառավարությունը, Դատարանը հաշվի է առնում
իր վերոնշյալ եզրահանգումն այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը
պատասխանատու է ԼՂՀ-ի խանութային գործողությունների եւ անգործության
համար, եւ որ այն ստանձնել է պարտավորություն այդ տարածքում Կոնվենցիայով
սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար:
Հետեւաբար Կառավարության փաստարկն այն մասին, որ ԼՂՀ-ն առանձին
սուբյեկտ է, որտեղ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը չի կիրառվում,
սույն գործի նպատակներով արհեստական է (տե՛ս, *mutatis mutandis*, Դեմոպուլոսը
եւ այլք ընդդեմ Թուրքիայի (որոշում) [ՄՊ] [*Demopoulos and Others v. Turkey (dec.)*
[GC]], թիվ 46113/99 եւ 7 այլ փաստաթղթեր, § 89, ՄԻԵԴ 2010 թվական). Այսպիսով,
անկախ պատճառներից, դիմումատուն իր գործի հատուկ հանգամանքներում
հնարավորություն չի ունեցել կամ զրկված է եղել զինվորական ծառայության
փոխարեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն իրականացնելու
հնարավորությունից, մի հանգամանք, որն ի վերջո հանգեցրել է նրա
դատապարտմանը եւ ազատազրկմանը: Այդ փաստը բավարար է, որպեսզի
Դատարանը եզրակացնի, որ իշխանությունները պատշաճ կերպով հաշվի չեն առել
դիմումատուի խղճի ու համոզմունքների պահանջները եւ չեն ապահովել
այլընտրանքային ծառայության այնպիսի համակարգ, որով արդարացի
հավասարակշռություն կհաստատվեր ընդհանուր առմամբ հասարակության եւ
դիմումատուների շահերի միջեւ, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 9-րդ
հոդվածով: Հետեւաբար դիմումատուի նկատմամբ պատիժ սահմանելը համարվում
է միջամտություն, որը, սույն դրույթի իմաստով, անհրաժեշտ չէ
ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս վերելում հիշատակված
Բայաթյանի գործը, §§124-128, վերելում հիշատակված՝ Բուխարաթյանի գործը,
§ 48-49, վերելում հիշատակված՝ Ծատուրյանի գործը, §44-45 եւ Ադյանը եւ այլք
ընդդեմ Հայաստանի [*Adyan and Others v. Armenia*], թիվ 75604/11, § 72, 2017
թվականի հոկտեմբերի 12):

59. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

III ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

60. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա) Վնասը

61. Դիմումատուն պահանջել է 36 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

62. Կառավարությունը դիմումատուի պնդման վերաբերյալ մեկնաբանություններ չի ներկայացրել:

63. Դատարանը համարում է, որ դիմումատուի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի եւ ազատազրկման հետեւանքով նա անկասկած կրել է ոչ նյութական վնաս: Այն դիմումատուին շնորհում է 9 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ) Ծախսերը եւ ծախքերը

64. Դիմումատուն նաեւ պահանջել է 2 000 եվրո ներպետական դատարաններում եւ 3 000 եվրո՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

65. Կառավարությունը դիմումատուի պնդման վերաբերյալ մեկնաբանություններ չի ներկայացրել:

66. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է,
որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել
է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում հաշվի առնելով իր տրամադրության
տակ գտնվող փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշները՝ Դատարանը ողջամիտ
է համարում շնորհել 1 500 եվրո՝ որպես բոլոր պահանջների մասով կրած
ծախսերի եւ ծախքերի հատուցում՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա
ցանկացած հարկ:

Գ) Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

67. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող
տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի
սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի
երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Մերժում է* գանգատը ցուցակից հանելու Կառավարության պահանջը.
2. Հայտարարում է դիմումատուի՝ մտքի, խղճի եւ կրոնի ազատության
վերաբերյալ բողոքն *ընդունելի*.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում.

4. *Վճռում է*, որ՝

ա) պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ
կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից երեք
ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները,
որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝
վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 9 000 եվրո (ինը հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 1 500 եվրո (հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2021 թվականի հուլիս 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Իլգե Ֆրայվիրտ
Քարտուղարի տեղակալ

Յոնկո Գրոզեւ
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Հարությունյանի առանձին կարծիքը:

Y.G.R.I.F.

ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԸՆԿՆՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

I Ներածություն

Չնայած Դատարանն արդեն ունեցել է Լեոնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների նկատմամբ արդյունավետ վերահսկողության հարցի վերաբերյալ իր կարծիքն արտահայտելու հնարավորություն, հարկ է նշել, որ Չիրագովն ընդդեմ Հայաստանի գործում ([ՄՊ][GC], թիվ 13216/05, ՄԻԵԴ 2015) արտահայտված կարծիքը ներկա իրավիճակում միանգամայն արդիական չէ՝ վերջին զարգացումների եւ 2020 թվականի Լեոնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի արդյունքների լույսի ներքո:

Չիրագովի եւ այլոց գործի շրջանակներում Դատարանը վճռել է, որ մի շարք գործոններ, ինչպիսիք են տնտեսական, ֆինանսական եւ ռազմական կապերը, հնարավոր են դարձրել հաստատելու այն փաստը, որ Հայաստանը Լեոնային Ղարաբաղի նկատմամբ ունեցել է արդյունավետ վերահսկողություն եւ հետեւաբար պետք է կրի իր դրական պարտավորություններից բխող պատասխանատվությունները: Հարկ է նշել, որ Դատարանը վերջերս ձեւավորված նախադեպային իրավունքում ընդգծել է, որ միջազգային մարդասիրական իրավունքի իմաստով «արդյունավետ վերահսկողություն» եզրույթը համարժեք չէ «օկուպացիա» եզրույթին, եթե այն սահմանվում է միջազգային հանրային իրավունքի չափանիշներից տարբերվող՝ Դատարանի սեփական չափանիշների հիման վրա:

Լեոնային Ղարաբաղում ու դրա հարակից տարածքներում քառասունչորսօրյա պատերազմի իրադարձությունների լույսի ներքո արդյունավետ վերահսկողության իրավիճակը հիմնարար կերպով փոխվել է, եւ Դատարանի՝ նախկինում ձեւավորած նախադեպային իրավունքի վերաբերյալ եզրակացությունն այլեւս վավեր չէ: Հայաստանին պարտադրված հրադադարի մասին 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո¹ (որը միջազգային իրավունքի եւ սահմանադրական օրենքի տեսանկյունից լուրջ

¹ Կրեմլ, Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը՝ հրապարակված 2020 թվականի նոյեմբերի 10 -ին: <http://en.kremlin.ru/events/president/news/64384>

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
մտահոգություններ է առաջացրել) Լեոնային Ղարաբաղի եւ հարակից յոթ
շրջանների նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը բաժանվել է Եվրոպայի
խորհրդի երկու անդամ պետությունների՝ Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

II ՓԱՍՏԵՐԸ

Ա. Լեոնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը

2020 թվականի Լեոնային Ղարաբաղի պատերազմից հետո Ադրբեջանը ձեռք է
բերել վերահսկողություն Լեոնային Ղարաբաղի անբաժանելի մասերի, այդ թվում՝
Հադրութի եւ Շուշիի շրջանների նկատմամբ, որոնք բռնազավթել էր ռազմական
գործողությունների ընթացքում: Հրադադարի մասին եռակողմ հայտարարությամբ
այն նաեւ պահպանել է իր վերահսկողությունը Լեոնային Ղարաբաղը շրջապատող
չորս հարակից տարածքների՝ Քուբադլիի, Ջանգիլանի, Ջաբրայիլի եւ Ֆիզուլիի
նկատմամբ, որոնք բռնազավթել էր պատերազմի ժամանակ, եւ մնացած երեք
տարածքների՝ Ադդամի, Լաչինի եւ Կալբաջարի նկատմամբ վերջինիս շնորհիվ է
արդյունավետ վերահսկողության իրավունք: Միակ տարածքը, որի նկատմամբ
արդյունավետ վերահսկողությունը ներկայումս Ադրբեջանի իրավագործության
ներքո չէ, Լաչինի միջանցքն է (5 կմ լայնությամբ), որով Հայաստանը միանում է
Լեոնային Ղարաբաղին: Միջանցքի վերահսկողությունն իրականացնում են
Ռուսաստանի Դաշնության զինված ուժերը:

Լեոնային Ղարաբաղի ներկայիս տարածքը, որը չի փոխանցվել Ադրբեջանին,
գտնվում է ռուսական «ցամաքային զորքերի» հսկողության տակ: Հիշեցնենք, որ
նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը ոչ թե Լեոնային Ղարաբաղում
ապահովում է միջազգային, այլ ավելի շուտ՝ ռուսական խաղաղապահ
առաքելությունը, ինչը պատշաճ կերպով համաձայնեցված չի եղել ԵԱՀԿ Մինսկի
խմբի համանախագահների հետ:

Լեոնային Ղարաբաղում ռուսական ռազմական բազայի գլխավոր

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
հրամանատարը փաստացի որոշում կայացնողն է: Հայաստան-Լեռնային
Ղարաբաղ ճանապարհին՝ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայված ռուս
սահմանապահները որոշում են, թե ով կարող է կամ չի կարող այցելել Լեռնային
Ղարաբաղ: Վերջերս բազմաթիվ միջազգային լրագրողների մերժել են այցելության
նպատակով Լեռնային Ղարաբաղ մուտք գործել՝ մարդկանց կյանքի վրա
հետպատերազմյան հետեւանքները փաստագրելու համար²:

Լեռնային Ղարաբաղում արդյունավետ վերահսկողության փոփոխությունը
մեծապես նպաստել է ադրբեջանական զորքերի կողմից Հայաստանի
Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում նոր ձեւավորված ադրբեջանա-հայկական
սահմանի շարունակական խախտումներին: Սահմանի հարկադիր
սահմանագծումն իրականացվում է՝ հաշվի առնելով «ՋԻՓԻԵՍ» միացումները եւ
«Գուզլ քարտեզները» (մասնավոր ընկերության կողմից մշակված հավելված), որը
միջազգային հանրության կողմից լուրջ դատապարտման տեղիք է տվել: Նման
գործելակերպը հիմնված չէ միջազգային հանրային իրավունքի եւ միջազգային
հասարակական կարգի վրա:

Ադրբեջանի այս պահվածքը թույլ է տվել Ռուսաստանին մեծացնել իր
ռազմական ազդեցությունը Հայաստանի վրա՝ իր զինծառայողներին տեղակայելով
Հայաստանի հարավում: Փաստացի, Ռուսաստանն իր դիրքերն է ամրապնդում
Հայաստանում՝ որպես Հայաստանի նկատմամբ արդյունավետ վերահսկողության
իրականացման գերակա չափորոշիչ: 2021 թվականի հունիսի 17-ի դրությամբ
Ռուսաստանը ծրագրում է իր զինված ուժերի լրացուցիչ տեղակայումը
Հայաստանի Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում³:

2 «Լրագրողներ առանց սահմանների», «ռուս խաղաղապահները մերժել են օտարերկրյա
լրագրողների մուտքը Լեռնային Ղարաբաղ», 2021 թվականի ապրիլի 9:
<https://rsf.org/en/news/russian-peacekeepers-deny-foreign-reporters-access-nagorno-karabakh>

3 <https://mil.am/hy/news/9547>

Բ. Արդյունավետ վերահսկողության ազդեցությունը ժողովրդագրական փոփոխությունների վրա

Տարածքային փոփոխություններն անմիջական ազդեցություն են ունեցել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վրա: 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմն ուղեկցվել է տասնյակ հազարավոր էթնիկ հայ բնակիչների՝ Լեռնային Ղարաբաղի հարավային մասում գտնվող Հադրութի եւ Շուշիի հիմնական բնակավայրերից, ինչպես նաեւ տարածաշրջանից դուրս գտնվող տարածքներից հեռացումով⁴: Քանի որ այս շրջաններում ռազմական եւ քաղաքական վերահսկողությունը փոխվել էր, Հադրութի եւ Շուշիի ամբողջ բնակչությունն իր կյանքին ու ունեցվածքին սպառնացող մշտական վտանգի պայմաններում ստիպված է եղել փախչել:

Լեռնային Ղարաբաղից եւ հարակից շրջաններից հայ բնակչության վտարումն ուղեկցվել է բազմաթիվ սոցիալական լրատվության միջոցներով տարածված հայ զինվորների եւ խաղաղ բնակիչների մահապատժի տեսանյութերով, ինչպես նաեւ տների քանդման եւ հատկապես Հադրութում ու Շուշիում հայերի մշակութային եւ կրոնական ժառանգության ոչնչացման տեսանյութերով^{5 6 7}: Ադրբեջանում հայերի նկատմամբ այդ հանցագործությունները կատարողների դեմ ոչ մի գործ չի հարուցվել:

4 Կոնգրեսի հետազոտական ծառայություն, «Ադրբեջանը եւ Հայաստանը. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը», 2021 թվականի հունվարի 7, էջ 15: <https://fas.org/srgp/crs/row/R46651.pdf>

5 «Հյուման Բայթս Վոթչ», «Ադրբեջան. վատ վերաբերմունքը հայ ռազմագերիների նկատմամբ. խախտումների ուսումնասիրում, հետապնդում. կալանքի տակ պահվող բոլոր զինվորականների պաշտպանության ապահովում», 2020 թվականի դեկտեմբերի 2: <https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated>

6 «Հյուման Բայթս Վոթչ», «Ադրբեջան. Կալանքի տակ պահվող հայ ռազմագերիները ենթարկվել են բռնության. բռնության դեպքերի ուսումնասիրում. բոլոր կալանավորված անձանց պաշտպանություն», 1921 թվականի մարտի 19: <https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody>

7 «Զարթոնք մեդիա», «Ադրբեջանցիները հրապարակում են իրենց զինվորների տեսանյութերը, որոնք նվաստացնում եւ սպանում են երկու հայ զերիների, որոնցից մեկը՝ տարեց քաղաքացիական անձ», 2020 թվականի հոկտեմբերի 15: <https://zartontkmedia.com/2020/10/15/azeris-publish-videos-of-their-soldiers-humiliating-killing-two-armenian-captives-one-an-elderly-civilian/>

Ավելին, պատերազմի ավարտից հետո ադրբեջանական հասարակության մեջ ի հայտ է եկել պետության կողմից հովանավորվող հայատյացության տարր: Ադրբեջանի նախագահի կողմից Բաքվում բացված այսպես կոչված «Ռազմական ավարի պուրակում» ցուցադրված է պատերազմի ժամանակ որպես ավար վերցված հայկական ռազմական տեխնիկան եւ ցուցադրված են անմարդկային տեսարաններ, այդ թվում՝ մեռած եւ մահացող հայ զինվորներին պատկերող մոմե մանեկեններ: Ադրբեջանի նախագահին ուղղված դատապարտման խիստ նամակում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը նշել է. «Այսպիսի ցուցադրումը կարող է միայն ավելի սրել եւ ուժեղացնել երկարատեւ թշնամական տրամադրություններն ու ատելության խոսքը, ինչպես նաեւ բազմապատկել եւ խթանել անհանդուրժողականության դրսևորումները»⁸: Ադրբեջանի աշխատակազմի պաշտոնական պատասխանը, որը ցույց է տալիս հակամարտության հետեւանքով հայ բնակչությանը պատճառված շարունակական վնասների եւ մարդկային տառապանքների կանխումը մերժելը, եւս մեկ ապացույց է այն բանի, որ հայ փախստականները չեն կարող իրենց տներ անվտանգ վերադառնալու եւ խտրականությունից, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքից եւ իրենց կյանքին սպառնալիքներից զերծ արժանապատիվ կյանքի հույս ունենալ⁹: Հետեւաբար, ինչպես նախկինում պնդել են Հայաստանը եւ տեղի հայերը, Ադրբեջանի իրավագործությունը վտանգավոր է այդ հողերում բնակվող էթնիկ հայերի եւ հայկական մշակութային ժառանգության անվտանգության համար: Ադրբեջանում հայերի նկատմամբ էթնիկ ատելության տարրը Դատարանը ճանաչել է նաեւ տարբեր գործերով (տե՛ս, օրինակ, Մակուչյանը եւ Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի եւ Հունգարիայի [Makuchyan and Minasyan v. Azerbaijan and

8 Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի նամակը, 2021 թվականի ապրիլի 27: <https://www.coe.int/en/web/commissioner/-/azerbaijan-efforts-to-deal-with-the-past-should-become-the-priority-to-ensure-reconciliation-andlasting-peace>

9 Եվրոպայի խորհրդին Ադրբեջանի Հանրապետության մշտական ներկայացուցչի պատասխանը, 2021 թվականի ապրիլի 20: <https://rm.coe.int/reply-of-the-azerbaijani-authorities-to-the-letter-of-the-council-of-e/1680a24413>

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՍՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
Hungary] թիվ 17247/13, 2020 թվականի մայիսի 26, Սարիբեկյանն ու Բալյանն
ընդդեմ Ադրբեջանի [Saribekyan and Balyan v. Azerbaijan], թիվ 35746/11,
2020 թվականի հունվարի 30):

Ադրբեջանը շարունակել է պահել հայ ռազմագերիներին՝ լրջորեն խախտելով
միջազգային մարդասիրական իրավունքը եւ մարդու իրավունքների միջազգային
նորմերը՝ չնայած միջազգային հանրության՝ նրանց ազատ արձակելու բազմաթիվ
կոչերին: 2021 թվականի մայիսի 20-ին Եվրոպական պառլամենտը դատապարտել
է Ադրբեջանին՝ ռազմական գործողությունների ակտիվ փուլի ավարտից ի վեր հայ
ռազմագերիներին եւ գերեվարված այլ անձանց նվաստացուցիչ պայմաններում
պահելու եւ խոշտանգելու համար: Այն նաեւ կոչ է արել Ադրբեջանի
կառավարությանը համագործակցել Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի հետ եւ կատարել գործող միջանկյալ միջոցները: Վերջապես,
Եվրոպական պառլամենտը պահանջել է «անհապաղ եւ անվերապահորեն ազատ
արձակել բոլոր հայ դատապարտյալներին՝ ինչպես զինվորական, այնպես էլ
քաղաքացիական, որոնք կալանավորվել են Ադրբեջանի կողմից
հակամարտության ընթացքում եւ դրանից հետո, եւ որ Ադրբեջանը հետագայում
գերծ մնա մարդկանց կամայական կերպով կալանավորելուց»¹⁰:

**Գ) Ադրբեջանի կողմից գրավված դիրքերը եւ արդյունավետ
վերահսկողությունը Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ**

Չնայած նույնիսկ ստորագրված հրադադարի մասին հայտարարության
արդյունքում ստեղծված նոր շփման գծում Ադրբեջանի եւ Հայաստանի զինված
ուժերի միջեւ տեղի են ունեցել մի շարք բախումներ, սակայն Հայաստանի
միջազգայնորեն ճանաչված սահմանների խորքում գտնվող կոնկրետ տարածքներ
նպատակային ներխուժման մասին հաղորդումները ներկայացվել են 2021
թվականի մայիսի սկզբին:

¹⁰ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջին հակամարտության հետեւանքով ռազմագերիների
մասին Եվրոպական պառլամենտի 2021 թվականի մայիսի 20-ի բանաձեւը (2021/2693 (RSP)):
https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0251_EN.html (շեշտադրումն ավելացված է):

Մասնավորապես 2021 թվականի մայիսի 12-ին մի քանի հարյուր ադրբեջանցի զինվոր 3,5 կիլոմետր առաջ են շարժվել դեպի Հայաստանի Սյունիքի մարզի Իշխանասար գյուղի մոտակայքում՝ Մեւ լճի շրջանում գտնվող միջազգային սահմանային գոտի: Նմանօրինակ ներխուժումը կասեցվել է նաեւ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղից հարավ, տարածքներ, որոնք Խորհրդային տարիներին երբեք Ադրբեջանի կազմում չեն եղել¹¹: Այսպիսով, Հայաստանի ներսում կոնկրետ տարածքներ ներկայումս գտնվում են Ադրբեջանի արդյունավետ վերահսկողության ներքո: «Հայաստանին արտաքին սպառնալիքներից պաշտպանելու համար» Հայաստանում տեղակայված լրացուցիչ ռուսական զորքերը չեն կատարել իրենց միջազգային պարտավորությունները:

Հայաստանում կոնկրետ ռազմավարական տարածքների օկուպացիայի վերաբերյալ միջազգային արձագանքը եղել է կոշտ եւ այն աջակցել է Հայաստանի տարածքային ամբողջականությանը:

2021 թվականի մայիսի 27-ին ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարել է, որ անհանգստացած է «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջազգային սահմանի երկայնքով տեղի ունեցող վերջին իրադարձություններով, այդ թվում՝ ադրբեջանական ուժերի կողմից մի քանի հայ զինվորների կալանքի տակ պահելու խնդրով»¹²: Ավելին, այն նշել է. «Մասնավորապես մենք կոչ ենք անում Ադրբեջանին իր զինված ուժերը տեղափոխել այն դիրքեր, որոնք նրանք զբաղեցրել են մայիսի 11-ին: Մենք նաեւ կոչ ենք անում Հայաստանին տեղափոխել իր զինված ուժերն այն դիրքեր, որոնք նրանք զբաղեցրել են մայիսի 11-ին եւ ողջունում ենք այդ նպատակով մտադրության մասին արված հայտարարությունները: Այդ գործողությունները կնվազեցնեն լարվածությունը եւ միջավայր կստեղծեն խաղաղ

¹¹ <https://mirrorspectator.com/2021/05/24/armenia-rules-out-border-demarcation-talks-until-azerbaijani-forces-pull-out-of-armenian-territory/>

¹² <https://www.state.gov/detention-of-armenian-soldiers/>

ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՋԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱԿԵՐՈՒՄ ԳՈՐԾԵՐՔԱԳԻ ԽԱՄԱՐ՝ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿԱԽԱՏՎԱԾՈՒՄ ՍԱԽՄԱՆՐ ՍԱԽՄԱՆԱԳԱՏԵԼՈՒ ՆԱԿԱՏԱԿՈՎ: ՄԻԱԾՅԱԼ ՆԱԽԱՆԳՆԵՐԸ ՎԱՏՐԱՍՏ Է ԱԶԱԿԵԼ ԱՅՂ ԶԱՆՔԵՐԻՆ»:

2021 թվականի մայիսի 14-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Ադրբեջանի զինված ուժերը հատել են Հայաստանի սահմանը: Նրանք պետք է անհապաղ հետ քաշվեն: Եվս մեկ անգամ ասում եմ հայ ժողովրդին. Ֆրանսիան, ի նշան համերաշխության, ձեր կողքին է եւ կշարունակի այդպիսին էլ մնալ»¹³: 2021 թվականի մայիսի 27-ին Ֆրանսիայի՝ Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարությունը «իր խորը մտահոգությունն է հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին նկատվող միջադեպերի աճի կապակցությամբ, որոնցից վերջինը մայիսի 26-ի երեկոյան ադրբեջանական զինված ուժերի կողմից վեց հայ զինծառայողների գերեվարումն է եղել» եւ վերահաստատել է նախագահ Մակրոնի՝ մայիսի 14-ի հայտարարությունը¹⁴: 2021 թվականի հունիսի 1-ին Ֆրանսիայի նախագահը կրկին հայտարարել է, որ «ադրբեջանական զորքերը պետք է հեռանան Հայաստանի ինքնիշխան տարածքից», եւ կոչ է արել կողմերին «վերադառնալ նախկինում զբաղեցրած դիրքերը»¹⁵:

2021 թվականի մայիսի 28-ին Եվրոպական միության արտաքին գործողությունների ծառայությունը հայտարարություն է տարածել՝ կոչ անելով կողմերին վերադառնալ մինչեւ 2021 թվականի մայիսի 12-ը զբաղեցրած դիրքերը: Հայտարարությունն ունի հետևյալ բովանդակությունը. «Բոլոր ուժերը պետք է հետ գնան մինչեւ մայիսի 12-ը զբաղեցրած դիրքերը, եւ երկու կողմերը պետք է բանակցություններ վարեն սահմանների սահմանագատման եւ սահմանագծման շուրջ: Մենք շարունակում ենք կոչ անել Ադրբեջանին առանց ձգձգումների

¹³ <https://twitter.com/EmmanuelMacron/status/1392965873187659778>

¹⁴ <https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/news/article/armenia-azerbaijan-incidents-on-the-border-between-armenia-and-azerbaijan-may>

¹⁵ <https://www.rferl.org/a/france-macron-nagorno-karabakh/31284862.html>

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ազատել բոլոր ռազմագերիներին եւ կալանքի տակ գտնվողներին»¹⁶:

Ի վերջո, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները 2021 թվականի մայիսի 28-ի հայտարարության մեջ Ադրբեջանին կոչ են արել «ազատ արձակել ... բոլոր ռազմագերիներին եւ կալանքի տակ պահվող մյուս անձանց՝ բոլորը բոլորի դիմաց սկզբունքով» եւ նշել են, որ «ուժի կիրառումը կամ դրա սպառնալիքը սահմանային վեճերի լուծման հարցում անընդունելի է»¹⁷:

III. Եզրակացություն

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դատարանը պետք է ավելի հստակ ձեւակերպում տա, քանի որ Լեռնային Ղարաբաղում եւ հարակից տարածքներում արդյունավետ վերահսկողության վերաբերյալ իր նախորդ նախադեպային իրավունքն այլեւս չի համապատասխանում ներկա իրականությանը: Ավելի կոնկրետ, Դատարանը պետք է պարզաբանի, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների նկատմամբ այլեւս չի իրականացնում արդյունավետ վերահսկողություն: Փաստորեն, քառասունչորսօրյա պատերազմի արդյունքում ի հայտ են եկել Լեռնային Ղարաբաղի եւ հարակից տարածքների արդյունավետ վերահսկողության երկու «շահառու»՝ Ռուսաստանի Դաշնությունը, որն արդյունավետ վերահսկողություն է իրականացնում Լեռնային Ղարաբաղի մնացած հատվածի, Լաչինի միջանցքի նկատմամբ եւ ամրապնդում է իր «ռազմական ներկայությունը» Հայաստանում, եւ Ադրբեջանը՝ Լեռնային Ղարաբաղի բոլոր հարակից տարածքների, Լեռնային Ղարաբաղի Շուշիի եւ Հադրութի շրջանների եւ Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում հայկական որոշ տարածքների նկատմամբ: Առանց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մյուս երկու անդամների՝ Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի մասնակցությամբ սահմանազատման եւ

¹⁶ https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/99246/armeniaazerbaijan-statement-spokesperson-recent-developments-border_en

¹⁷ <https://www.osce.org/minsk-group/487879>

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ. ԱՌԱՆՁԻՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
սահմանագծման իրականացման վերաբերյալ Ռուսաստանի եւ Ադրբեջանի կողմից
արված հայտարարությունները հակասում են Լեռնային Ղարաբաղի
հակամարտության կարգավորման միջազգայնորեն ճանաչված ձեւաչափին: